

Արդվի համայնք
 ՎԱՐՉԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԱՇԱՐ
 ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

1. Գործառույթը՝ կազմակերպում է աղբահանությունը և սանիտարական մաքրումը, ինչպես նաև իրականացնում է «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված այլ լիազորություններ, աջակցում է սանիտարական վիճակի բարելավմանը.
2. Գործառույթի իրականացման օրենսդրական հիմքը՝ ՀՀ կառավարության 2007թ.հոկտեմբերի 4-ի N 1161-Ն որոշում:

Դրույթների անվանումը	Պահպանված է	Թերի է Պահպանված	Պահպանված չէ	Հայտնաբերված խախտումները	Առաջարկություններ հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերջման վերաբերյալ	Հայտնաբերված խախտումները վերացնելու նպատակով սահմանված ժամկետները
1. Ապահովված են սպառման թափոնների հեռացման ՀՀ օրենսդրությամբ սահմանված հաճախականությունը՝ առնվազն երեք օրը մեկ անգամ, 2. +5°C և ավելի բարձր օդի ջերմաստիճանի դեպքում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված ամեն օր հաճախականությունը:	Արդվի համայնքում աղբահանություն չի իրականացվում					
3. Աղբախցերը ապահովված են ամուր փակվող դռներով 1) ունեն սողնակ, 2) աղբախցի դռան ստորին մասը և շենքերը պատված են թիթեղով:						
4. Ապահովված է աղբախցեր կրծողների և միջատների ներթափանցման բացառումը՝ հատակների անցքերը և բացվածքները ամրակցված են:						

3. Գործառույթը ըստ <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի՝ (այսուհետ՝ ՏԻՄ Օրենք) կազմակերպում է աղբահանությունը և սանիտարական մաքրումը, ինչպես նաև իրականացնում է «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված այլ լիազորություններ, աջակցում է սանիտարական վիճակի բարելավմանը:

4. Գործառույթի իրականացման օրենսդրական հիմքը՝ ՀՀ առողջապահության նախարարի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 25-Ն հրամանով հաստատված «Բնակավայրերի տարածքների սանիտարական պահպանմանը, սպառման թափոնների հավաքմանը, պահմանը, փոխադրմանը, մշակմանը, վերամշակմանը, օգտահանմանը, վնասագերծմանը և թաղմանը, բնակավայրերի տարածքների սանիտարական պահպանման, սպառման թափոնների գործածության ոլորտում աշխատանքներ իրականացնող անձնակազմի աշխատանքային անվտանգությանը ներկայացվող հիգիենիկ պահանջներ» N 2.1.7.002-09 սանիտարական կանոններ և նորմեր:

Դրույթների անվանումը	Պահպանված է	Թերի է Պահպանված	Պահպանված չէ	Հայտնաբերված խախտումները	Առաջարկություններ հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերջման վերաբերյալ	Հայտնաբերված խախտումները վերացնելու նպատակով սահմանված ժամկետները
1. Առկա են աղբահանության սխեմաները, համաձայն որոնց իրականացնում են ոչ վնասակար թափոնների հավաքումը՝ սպառման թափոնների փոխադրումը (աղբահանությունը):						
2. Առկա են կոնտեյներներ, որոնք 1) ունեն կափարիչներ, 2) պարունակում են աղբահանության ընկերության հասցեն կամ անվանումը կամ ծածկագիրը, 3) ունեն մաքրման և ախտահանման ենթակա հարթ մակերեսներ:						
3. Կոնտեյներները տեղադրված են՝ բնակելի և հասարակական շենքերից ոչ պակաս, քան 15մ և ոչ ավելի, քան 100մ հեռավորության վրա:						
4. Կոնտեյներները տեղադրված են ոչ պակաս, քան 50մ հեռավորության վրա՝ պուրակներում, զբոսայգիներում՝ մարդկանց զանգվածային կուտակման						

վայրերից:						
5. Կոնտեյներներից աղբը հեռացնելու ժամանակ կոնտեյներների հարակից տարածքի աղբը տեղափոխված է:						
6. Կոնտեյներներից աղբը հեռացնելու ժամանակ կոնտեյներների հարակից տարածքը մաքրված է:						
7. Աղբահանության ժամանակ աղբակույտերը և տերևակույտերը այրված չեն:						
8. Աղբահավաք կոնտեյներները ախտահանված են համապատասխան ախտահանիչ լուծույթներով (ամիսը 1 անգամ հաճախականությամբ):						
9. Աղբանոթները ախտահանված են համապատասխան ախտահանիչ լուծույթներով (ամիսը 1 անգամ հաճախականությամբ):						
10. Բազմաբնակարան շենքերի աղբամուղի խողովակի ամբողջականությունը ապահովված է, 1) չկան ճաքեր և անցքեր, 2) միջհարկային տարածքներում բացվածքները ունեն հերմետիկ փակվող կափարիչներ:						
11. Աղբահավաք խցի մուտքը մեկուսացված է բնակելի շենքի մուտքից, խցի դռները հերմետիկ են:						
12. Աղբահավաք խցի ներքին մակերեսները ունեն մաքրման, լվացման և ախտահանման հնարավորություն ընձեռնող մակերեսներ՝ հարթ են, բարեկարգ, ամբողջական:						
13. Բազմաբնակարան շենքերի ընդհա- նուր օգտագործման տարածքների սանիտարական մաքրման աշխատանքներն իրականացված են						

(առնվազն երկու օրը մեկ անգամ):						
14. Բազմաբնակարան շենքերի ընդհանուր օգտագործման տարածքների, աղբամուղի և աղբահավաք խցերի դեզինսեկցիայի ու դեռատիզացիայի աշխատանքներն իրականացված են (առնվազն երեք ամիսը մեկ անգամ):						
15. Բազմաբնակարան շենքերի ընդհանուր օգտագործման տարածքների՝ նկուղային հարկի ջրամատակարարման և ջրահեռացման (կոյուղու) ցանցերի շահագործումը սարքին վիճակում են (բացառվում է խմելու ջրի և կոյուղաջրերի արտահոսքը և ջրակուտակումները):						
16. Փողոցները, ճանապարհները, հրապարակները, զբոսայգիները, պուրակները ենթարկված են սանիտարական մաքրման:		V		Թերի է պահպանվել ՀՀ առողջապահության նախարարի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 25-Ն հրամանով հաստատված N 2.1.7.002-09 սանիտարական կանոններ և նորմեր 3-րդ կետի 24,25,29 և 30 ենթակետերի պահանջները համաձայն որի. Շենքերի բակերը, միջբակային տարածքները, փողոցները, ճանապարհները, հրապարակները, զբոսայգիները, պուրակները ենթարկում են սանիտարական մաքրման , իսկ ամռան ամիսներին	Առաջարկվում է իրականացնել ՀՀ առողջապահության նախարարի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 25-Ն հրամանով հաստատված 3-րդ կետի 24, 25, 29 և 30 ենթակետերի պահանջները:	20 օր

				փողոցները ենթակա են նաև ջրման: Բնակավայրերը պահվում են պատշաճ սանիտարական վիճակում՝ սպառման թափոններից, շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող աղբից, կենցաղային ավելորդ իրերից, փոշու կուտակումներից զերծ:		
17. Ամռան ամիսներին փողոցները ենթարկված են ջրման:						Ընդունել ի գիտություն: Տարվա ընթացքում, օրենսդրությամբ սահմանված ժամանակահատվածում:
18. Բնակավայրերը պահված են պատշաճ սանիտարական վիճակում՝ սպառման թափոններից, շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող աղբից, կենցաղային ավելորդ իրերից, փոշու կուտակումներից զերծ:		v		Թերի է պահպանվել ՀՀ առողջապահության նախարարի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 25-Ն հրամանով հաստատված N 2.1.7.002-09 սանիտարական կանոններ և նորմեր 3-րդ կետի 24 ենթակետի պահանջները համաձայն որի. 24. Շենքերի բակերը, միջբակային տարածքները, փողոցները, ճանապարհները, հրապարակները, զբոսայգիները, պուրակները ենթարկում են սանիտարական	Առաջարկվում է իրականացնել ՀՀ առողջապահության նախարարի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 25-Ն հրամանով հաստատված 3-րդ կետի 24 ենթակետի պահանջները:	20 օր

				մաքրման, իսկ ամռան ամիսներին փողոցները ենթակա են նաև ջրման: Բնակավայրերը պահվում են պատշաճ սանիտարական վիճակում՝ սպառման թափոններից, շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող աղբից, կենցաղային ավելորդ իրերից, փոշու կուտակումներից զերծ:		
19. Ձմռանը փողոցների, ճանապարհների հետիոտնի համար նախատեսված և երթևեկելի մասերը, հրապարակների, զբոսայգիների հետիոտնի մասերը մաքրված են ձյունից և սառույցից:						Ընդունել ի գիտություն: Տարվա ընթացքում, օրենսդրությամբ սահմանված ժամանակահատվածում:
20. Աղբատար փոխադրամիջոցների հետ առկա են. 1) փակ թափքեր, 2) աղբաջրերը հավաքող համակարգ, 3) կողքից կամ հետնամասում կոնտեյներները բեռնող հիդրավլիկ սարք, 4) կոնտեյներները լվանալու համակարգ:						
21. Կոնտեյներները տեղադրված են ջրանթափանց, հարթ, բարեկարգ մակերեսով հարթակների վրա, որն ունի պատնեշ կամ մետաղյա դեկորատիվ ցանկապատ:						
22. Շենքերի աղբամուղները և աղբահավաք խցերը լվացվում և ախտահանվում են ամիսը 1 անգամ:						

5. Գործառույթը՝ կազմակերպում և կառավարում է համայնքի սեփականություն համարվող ներհամայնքային հաղորդակցության ուղիների, ջրմուղի, կոյուղու, ոռոգման ու ջեռուցման ցանցերի և այլ կառուցվածքների շահագործումը, աջակցում է առողջապահական մարմինների՝ սանիտարափիզիենիկ, հակահամաճարակային և կարանտինային միջոցառումների իրականացմանը,
6. Գործառույթի իրականացման օրենսդրական հիմքը՝ ՀՀ առողջապահության նախարարի 2002 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 876 հրամանով հաստատված «Խմելու ջուր: Ջրամատակարարման կենտրոնացված համակարգերի ջրի որակին ներկայացվող հիգիենիկ պահանջներ, որակի հսկողություն» N 2-III- Ա2-1 սանիտարական կանոններ և նորմեր:

Դրույթների անվանումը	Պահպանված է	Թերի է Պահպանված	Պահպանված չէ	Հայտնաբերված խախտումները	Առաջարկություններ հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերջման վերաբերյալ	Հայտնաբերված խախտումները վերացնելու նպատակով սահմանված ժամկետները
1.Ջրամատակարարման համակարգի կառույցներում կամ օբյեկտներում առաջացած վթարային իրավիճակների կամ տեխնիկական շեղումների վերացման ուղղությամբ ձեռնարկված և իրականացված են անհապաղ միջոցներ:	v					
2.Ջրամատակարարման բաշխիչ ցանցերում առկա է խմելու ջրի արտադրական հսկողության իրականացում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված (մանրէաբանական զգայորոշական ցուցանիշներով սահմանված հաճախականությամբ):			v	Չի պահպանվել ՀՀ առողջապահության նախարարի 2002 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 876 հրամանով հաստատված «Խմելու ջուր: Ջրամատակարարման կենտրոնացված համակարգերի ջրի որակին ներկայացվող հիգիենիկ պահանջներ, որակի հսկողություն» N 2-III- Ա2-1 սանիտարական կանոններ և նորմեր պահանջը՝ համաձայն որի,	Առաջարկվում է իրականացնել հսկողություն ջրամատակարարման բաշխիչ ցանցում խմելու ջրի արտադրական մանրէաբանական և զգայորոշական ցուցանիշներով՝ ՀՀ առողջապահության նախարարի 2002 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 876 հրամանով հաստատված «Խմելու ջուր: Ջրամատակարարման կենտրոնացված համակարգերի ջրի որակին ներկայացվող	20 օր

				Ջրամատակարարման բաշխիչ ցանցում խմելու ջրի արտադրական հսկողությունը կատարվում է մանրէաբանական և զգայորոշական ցուցանիշներով՝ հավելված 4-ում, հավելված 6-ում և հավելված 8-ում նշված պահանջներին համապատասխան:	հիգիենիկ պահանջներ, որակի հսկողություն» N 2-III- Ա2-1 սանիտարական կանոններ և նորմեր հավելված 4-ում, հավելված 6-ում և հավելված 8-ում նշված պահանջներին համապատասխան :	
3.Մինչև ջուրը բաշխիչ ցանց մղելը առկա է խմելու ջրի մնացորդային քլորի պարունակության հսկողության իրականացում:			v	Չի պահանջվել ՀՀ առողջապահության նախարարի 2002 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 876 հրամանով հաստատված «խմելու ջուր: Ջրամատակարարման կենտրոնացված համակարգերի ջրի որակին ներկայացվող հիգիենիկ պահանջներ, որակի հսկողություն» N 2-III- Ա2-1 սանիտարական կանոններ և նորմեր պահանջը՝ համաձայն որի, խմելու ջրի որակը մինչև ջրաբաշխիչ ցանց մտնելը, ինչպես նաև արտաքին ու ներքին ջրամատակարարման ցանցերի ջրառման կետերում պետք է համապատասխանի խմելու ջրի որակին ներկայացվող հիգենիկ պահանջներին և նորմերին:	Առաջարկվում է իրականացնել օրենսդրությամբ սահմանված գործառույթները՝ համաձայն ՀՀ առողջապահության նախարարի 2002 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 876 հրամանով հաստատված «խմելու ջուր: Ջրամատակարարման կենտրոնացված համակարգերի ջրի որակին ներկայացվող հիգիենիկ պահանջներ, որակի հսկողություն» N 2-III- Ա2-1 սանիտարական կանոններ և նորմեր, 3.կետի 3.2, 3.4 և 3.4.2 ենթակետերի, հավելված 3-ի և հավելված 7-ի:	20 օր

4.Ջրամատակարարման համակարգով տրվող խմելու ջրի որակը մանրէաբանական ցուցանիշներով համապատասխանում է նորմերին՝ նորմատիվների գերազանցում չի արձանագրվել ջրամատակարարման արտաքին և ներքին ցանցի ջրաբաշխիչ կետերից վերցված նմուշների 95 տոկոսում, 12 ամսվա ընթացքում, 100-ից ոչ պակաս հետազոտված նմուշների քանակի դեպքում, տարվա ընթացքում:	v					
5.Ջրամատակարարման համակարգով տրվող խմելու ջրի որակը ջրի մշակման ժամանակ ներմուծված և առաջացած վնասակար քիմիական նյութերի պարունակությամբ (մնացորդային ազատ քլոր և այլն) համապատասխանում է նորմերին:			v	Չի պահպանվել ՀՀ առողջապահության նախարարի 2002 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 876 հրամանով հաստատված «խմելու ջուր: Ջրամատակարարման կենտրոնացված համակարգերի ջրի որակին ներկայացվող հիգիենիկ պահանջներ, որակի հսկողություն» N 2-III-Ա2-1 սանիտարական կանոններ և նորմեր պահանջը՝ համաձայն որի, ջրամատակարարման համակարգով տրվող խմելու ջրի որակը ջրի մշակման ժամանակ ներմուծված և առաջացած վնասակար քիմիական նյութերի պարունակությամբ	Առաջարկվում է իրականացնել օրենսդրությամբ սահմանված գործառնությունները՝ համաձայն ՀՀ առողջապահության նախարարի 2002 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 876 հրամանով հաստատված «խմելու ջուր: Ջրամատակարարման կենտրոնացված համակարգերի ջրի որակին ներկայացվող հիգիենիկ պահանջներ, որակի հսկողություն» N 2-III- Ա2-1 սանիտարական կանոններ և նորմեր, հավելված 3-ի:	20 օր

				(մնացորդային ազատ քլոր և այլն) պետք է համապատասխանի նորմերին:		
--	--	--	--	--	--	--